

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՄԻԶՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ մասնակից պետություններ,

ընդունելով, որ գիտական, տեխնոլոգիական, տնտեսական եւ սոցիալական տեղեկատվությունը (գիտատեխնիկական տեղեկատվություն) հանդիսանում է սոցիալ-տնտեսական զարգացման կարեւոր գործոն եւ նրա հավաքումը, մշակումը եւ օգտագործումը պահանջում է հատուկ ենթակառուցվածք,

հաշվի առնելով համագործակցության եւ գիտատեխնիկական տեղեկատվության համատեղ օգտագործման համաշխարհային միտումները,

գիտակցելով կուտակված տեղեկատվական ռեսուրսների պահպանման եւ փոխշահավետ օգտագործման ու դրա զարգացման շանքերի ինտեգրացիայի անհրաժեշտությունը,

հարգելով գիտնականների եւ մասնագետների՝ անկախ նրանց քաղաքացիությունից եւ բնակության վայրից՝ ձգտումը ունենալու ազատ եւ հարմար մուտք տեղեկատվական աղբյուրներ, ընդունելով գիտատեխնիկական տեղեկատվության ազգային համակարգերի ստեղծման եւ զարգացման անհրաժեշտությունը, ցանկանալով պայմաններ ապահովել գիտատեխնիկական առաջընթացի համընդհանուր արագացման, գիտատեխնիկական գործունեության, արդյունավետության բարձրացման, ընդհանուր տեղեկատվական տարածքի եւ տեղեկատվական շուկայի ձեւավորման համար, նկատի ունենալով գիտատեխնիկական տեղեկատվության բնագավառում համագործակցության կազմակերպման եւ անցկացման համար ընդհանուր կունցեպտուալ եւ մեթոդոլոգիական հիմք ստեղծելու նպատակահարմարությունը, պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈՂՎԱԾ 1

Մասնակից պետություններից յուրաքանչյուրը՝

ապահովում է տեղեկատվական ռեսուրսների զարգացումը, դրանց համատեղ օգտագործման պայմանները, ինչպես նաև նախկինում համատեղ ստեղծված տեղեկատվական ռեսուրսներին մատչելիությունը,

աջակցություն է ցուցաբերում համատեղ գիտատեխնիկական ծրագրերին, նախագծերին, տեղեկատվական գործունեության բնագավառում գիտական հետազոտություններին եւ մշակումներին,

աջակցում է տեղեկատվական ենթակառուցվածքի իրավական, տեխնիկական եւ տեխնոլոգիական տարրերի ստեղծմանը եւ կիրառմանը, որոնք համատեղելի են ազգային եւ միջազգային տեղեկատվական համակարգերի համապատասխան տարրերի հետ:

ՀՈՂՎԱԾ 2

Համաձայնեցված տեղեկատվական քաղաքականության ձեւավորման եւ իրականացման, սույն Համաձայնագրի շրջանակներում գիտատեխնիկական տեղեկության միջայետական փոխանակման կարգի եւ պայմանների սահմանման համար ստեղծվում է Գիտատեխնիկական տեղեկատվության գծով միջայետական համակարգող խորհուրդ (ԳՏՄՀ):

ԳՏՄՀ կազմված է նշանակված լիազոր ներկայացուցիչներից եւ ղեկավարվում է ներկայացուցիչներից որեւէ մեկի կողմից ընտրության եւ կանոնավոր ռոտացիայի հիման վրա:

ԳՏՄՀ գործառույթները, աշխատանքային մարմինները, տեղակայման վայրն ու գործունեության ֆինանսավորումը սահմանվում են մասնակից պետությունների Կառավարությունների հաստատած կանոնադրությամբ:

ՀՈՂՎԱԾ 3

Տեղեկատվական ռեսուրսների, համատեղ ծրագրերի եւ նախագծերի համակարգված զարգացման պլանների իրականացման համար մասնակից պետությունները հաստատում են հատուկ հիմնադրամ:

Հիմնադրամի ձեւավորման եւ օգտագործման կարգը սահմանվում է մասնակից

պետությունների Կառավարությունների հաստատած կանոնադրությամբ:

ԲԱԺԻՆ 2. ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՎԱՐԱԿՈՒՄ

ՀՈՂՎԱԾ 4

Գիտատեխնիկական տեղեկության միջպետական փոխանակումը ծառայում է տեղեկատվական ընդհանուր տարածքի ստեղծմանը եւ իրականացվում է կամավոր հիմունքներով:

Գիտատեխնիկական տեղեկության միջպետական փոխանակման հիմնական ուղղություններն են՝

Դամագործակցության մասնակից պետությունների ձեռնարկությունների, հաստատությունների, կազմակերպությունների, առանձին գիտնականների եւ մասնագետների գիտահետազոտական, նախագծաշինարարական, արտադրական գործունեության մասին տվյալներ պարունակող համատեղ օգտագործման տեղեկատվական ռեսուրսների ձեռագործում, այն մասով, որ յուրաքանչյուր մասնակից երկիր նպատակահարմար է համարում,

գիտատեխնիկական տեղեկատվության համաշխարհային հոսքը արտացոլող տեղեկատվական ռեսուրսների համատեղ ձեւավորում եւ օգտագործում,

գիտատեխնիկական տեղեկատվության բևագավառում միջպետական համագործակցության համատեղ գիտատեխնիկական ծրագրերի, նախագծերի իրականացում, ներառյալ կադրերի պատրաստումը եւ վերապատրաստումը,

տեղեկատվական աշակցություն միջպետական գիտատեխնիկական համագործակցությանը:

ՀՈՂՎԱԾ 5

Գիտատեխնիկական տեղեկության միջպետական փոխանակումը իրականացվում է համատեղ մշակվող կոնցեպտուալ եւ մեթոդոլոգիական հիմքով, մասնակից պետությունների տեղեկատվական կառույցների միջոցով, որոնք ապահովում են դրանց իրավական, տեխնիկական եւ տեխնոլոգիական համատեղելիությունը, ներառյալ միջազգայինի հետ ներդաշնակ գիտատեխնիկական գործունեության ստանդարտացումը:

ՀՈՂՎԱԾ 6

Մասնակից պետությունները սահմանում են ազգային տեղեկատվական կենտրոնները, որոնք իրենց պետության մասշտաբով համակարգում են գիտատեխնիկական տեղեկության միջպետական փոխանակումը:

ՀՈՂՎԱԾ 7

Գիտատեխնիկական տեղեկության միջպետական փոխանակման աշխատանքային լեզուներն են Միավորված ազգերի կազմակերպության լեզուները:

ԲԱԺԻՆ 3. ՀԱՄԱԳՈՐԾՄԱՆ ՏԵՂԵԿԱՎԱՐԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՀՈՂՎԱԾ 8

Մասնակից պետությունների իրավասության ներքո եւ սեփականությունում գտնվող գիտատեխնիկական գրադարանների եւ գիտատեխնիկական տեղեկատվության մարմինների տեղեկատվական ռեսուրսների միագումարությունը, որը նրանց կողմից սահմանվում է որպես գիտատեխնիկական տեղեկության միջպետական փոխանակումը ապահովող կառուցվածքի տարրեր, ձեւավորում է համատեղ օգտագործման տեղեկատվական ռեսուրսները:

ՀՈՂՎԱԾ 9

Մասնակից պետությունները երաշխավորում են համատեղ օգտագործման տեղեկատվական ռեսուրսների նկատմամբ բաց եւ հավասար մատչելիություն, տեղեկատվական արտադրանքը եւ ծառայությունները տրամադրելով ինչպես անվճար

Եւ/կամ անշահութեաբեր հիմունքներով, այսպես էլ տեղեկատվական շուկայի շրջանակներում դրանց առեւտրային իրացման միջոցով:

ԲԱԺԻՆ 4. ՉԱՐԳՎԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԸ

ՀՈՂՎԱԾ 10

Գիտատեխնիկական տեղեկության միջայտական փոխանակման զարգացման ծրագրերի եւ նախագծերի ձեւավորումը կատարվում է ԳՏՍՌԽ կողմից մասնակից պետությունների առաջարկությունների հիման վրա՝ հաշվի առնելով գիտատեխնիկական տեղեկատվական ազգային համակարգերի շահերը:

Ծրագրերի եւ նախագծերի ձեւավորման եւ իրականացման կարգը, ընթացակարգերը սահմանվում են ԳՏՍՌԽ ընդունած ծրագրերի (նախագծերի) մասին կանոնադրությամբ եւ այլ փաստաթղթերով:

ՀՈՂՎԱԾ 11

Գիտատեխնիկական տեղեկության միջայտական փոխանակման զարգացման ծրագրերում եւ նախագծերում մասնակցությունը, ինչպես նաև այդ նպատակների համար միջոցների հատկացումը կամավոր է:

ՀՈՂՎԱԾ 12

Մասնակից պետությունները նպաստում են գիտատեխնիկական տեղեկության միջայտական փոխանակման համար կադրերի պատրաստմանը եւ որակավորման բարձրացմանը:

ԲԱԺԻՆ 5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈՂՎԱԾ 13

Յուրաքանչյուր պետություն իրավունք ունի ազատ դուրս գալու Համաձայնագրի մասնակիցների կազմից՝ առնվազն 12 ամիս առաջ Համաձայնագրի ավանդապահին գրավոր ծանուցելու միջոցով, որի մասին ավանդապահ պետությունը մեկամսյա ժամկետում ծանուցում է Համաձայնագրի բոլոր մասնակիցներին:

ՀՈՂՎԱԾ 14

Համաձայնագիրը բաց է այլ պետությունների կողմից միաևալու համար, որոնք հետաքրքրված են մասնակցելու Համաձայնագրին եւ պատրաստ են իրենց վրա վերցնել սույն Համաձայնագրից բխող պարտավորությունները:

Սույն Համաձայնագրում թույլատրվում է պետությունների ասոցացված անդամություն՝ իրենց վրա վերցնելով պարտավորությունների մի մասը:

ՀՈՂՎԱԾ 15

Մասնակցությունը Համաձայնագրում չի սահմանափակում Համաձայնագիրը ստորագրած պետությունների իրավունքը մասնակցելու գիտատեխնիկական տեղեկատվության բնագավառում միջայտական համագործակցության երկկողմ եւ բազմակողմ ձեւերում, այդ թվում՝ սույն Համաձայնագրի մասնակիցներ չհանդիսացող պետությունների հետ:

ՀՈՂՎԱԾ 16

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կատարված է Մինսկ քաղաքում 1992 թվականի հունիսի 26-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Ընօրինակը պահպում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի հունիսի 26-ից: